Կազմված է _27_.01_.2021թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՄԱՆԿԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
«_27_» հունվարի_2021թ.-ի

ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ՝

_____ Եվա Մովսեսյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ

ՕՐԻՆԱԿ 2

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ
«_29_»_08_ 2007թ.

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211.171.04503

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ
01008345

«29» 08 2007 թ.

ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ 001-2
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ
«11» 05 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
_____ Հ. Հովհաննիսյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՆԿԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(Նոր խմբագրություն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Մանկական բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

2. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

3.Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

4. Կազմակերպության անվանումն է՝
հայերեն՝ «Մանկական բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն.
ռուսերեն՝ Общественная организация “Армянская ассоциация детских врачей”.
անգլերեն՝ “Armenian Pediatric Association” non-governmental organization:

5. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ՀՀ, ք. Երևան 0014,Մամիկոնյանց փող. 30, «Արաբկիր բժշկական համալիր- Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ», հեռախոս՝ 010 236030, էլ. հասցե՝ armpa@yandex.com:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

6. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակն է՝ աջակցել Հայաստանում երեխաների և դեռահասների առողջության և զարգացման բարելավմանը:

7. Կազմակերպության խնդիրներն են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

- Երեխաների և դեռահասների առողջության պահպանման ոլորտում մեթոդական և կազմակերպչական աշխատանքների որակի բարելավում:
- Երեխաների և դեռահասների առողջության ոլորտի անձնակազմի գիտելիքների և հմտությունների բարելավում:
- Երեխաների և դեռահասների առողջությանը վերաբերվող գիտական հետազոտությունների իրականացում:

- Երեխաների և դեռահասների առողջության պահպանման ոլորտում նպատակային բժշկական և սոցիալական ծրագրերի մշակում և իրականացում:
- Երեխաների և դեռահասների առողջության հարցերի շուրջ ընտանիքների գիտելիքների և հմտությունների բարելավում, քարոզչական աշխատանքի իրականացում:
- Երեխաների և դեռահասների առողջության հարցերի շուրջ բնակչության իրազեկության բարձրացում:
- Բարեգործական գործունեության իրականացում, այդ թվում նաև՝ մասնագետ-անդամների և հրավիրված այլ մասնագետների միջոցով անվճար բժշկական օգնության իրականացում:
- Աջակցում երեխաների և դեռահասների առողջության պահպանման ոլորտի օրենսդրական դաշտի բարելավմանը:
- Երեխաների և դեռահասների իրավունքների և շահերի պաշտպանություն՝ գործող ՀՀ օրենսդրությանը և միջազգային իրավական նորմերին և ակտերին համապատասխան:
- Երեխաների և դեռահասների առողջության պահպանման ոլորտում միջազգային համագործակցության զարգացում, ժամանակակից փորձի ներդրում:
- Գիտական համագումարների, կոնֆերասների, համաժողովների, սեմինարների կազմակերպում:
- Երեխաների և դեռահասների առողջության պահպանման ոլորտում ներգրավված աշխատակիցների իրավունքների պահպանում:
- Այլ կազմակերպությունների, ընկերությունների և միությունների հետ կապերի զարգացում և ամրապնդում:

8. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կազմակերպությունների հետ:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

9. Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ցանկացած ֆիզիկական անձ, ով ընդունում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակները և ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը:

10. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության Նախագահին:

11. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Նախագահը՝ սույն Կանոնադրության հիման վրա:

12.Կազմակերպության անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից հեռացումը կատարվում է Նախագահի որոշմամբ:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

1) ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում,
2) ներկա գտնվել Ժողովին անձամբ կամ պատվիրակների միջոցով,
3) ցանկացած դեպքում անվճար օգտվել Կազմակերպության ծառայություններից,
4) Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ,
5) սպառիչ տեղեկատվություն ստանալ կազմակերպության գործունեության մասին,
6) ազատ դուրս գալ կազմակերպությունից,
7) Կազմակերպությունից ստանալ իրավական օգնություն՝ ուղղված իր օրինական շահերի պաշտպանությանը,
8) մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին,
9) ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները,
10) վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները: Կազմակերպության անդամի կողմից գործադիր մարմնի որոշումների բողոքարկումն իրականացվում է Ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է Ժողովը: Դիմումի քննարկումը կարող է կատարվել նաև հեռակա կարգով,
11) Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, Կազմակերպության մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին 3 տարիներին,
12) իրականացնել օրենքով սահմանված այլ իրավունքներ:

14. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

1) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,
2) բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,
3) հոգ տանել Կազմակերպության հեղինակության մասին,

4) մուծել անդամավճար՝ Խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում, որի չափն ու վճարման կարգը սահմանում է Խորհուրդը,

15. Կազմակերպության կանոնադրական պահանջները խախտելու կամ Կազմակերպության կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում Կազմակերպության անդամի նկատմամբ Կազմակերպության նախագահի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության կամ Կազմակերպության անդամությունից հեռացնելու ձևով: Կազմակերպության անդամը անդամավճարները 6 ամիս անընդմեջ չվճարելու դեպքում հեռացվում է անդամությունից:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

16. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:

17. Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

1) Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, կնիք՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթով:

2) Կազմակերպությունը ունի խորհրդանիշ, որում պատկերված է բժշկության սիմվոլը՝ երկու գորշագույն օձերով՝ սիմետրիկ երկու կողմից փաթաթված կապույտ բաժակը և երեխան արևի ֆոնի վրա, շրջանակված «Մանկական Բժիշկների Հայկական Ասոցիացիա» բառերով:

3) Իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող.

4) բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով.

5) համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.

6) իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, այդ թվում՝ կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային հասարակական կազմակերպություններին, իր անդամներին և այլ անձանց գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ.

7) ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակիցը.
8) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ.
9) Կազմակերպությունն իրավունք ունի սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինել իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծել առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից.
10) տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին.
11) կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ.
12) օրենքով սահմանված կարգով ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.
13) կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18. Կազմակերպությունը պարտավոր է՝
1) վարել իր անդամների հաշվառումը.
2) ենթարկվել պարտադիր աուդիտի օրենքով սահմանված կարգով.
3) պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը.
4) օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Պետական եկամուտների կոմիտեի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր.
5) Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
6) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել Գործակալություն.
7) իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության Գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը.
8) կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Կազմակերպության կառավարման մարմիններն են ժողովը, Նախագահը, Կառավարման խորհուրդը (այսուհետ՝ նաև խորհուրդ) և գործադիր մարմինը՝ տնօրենը:

Կազմակերպության ժողովը

20. Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին:

21. Կազմակերպության հերթական ժողովը գումարվում է առնվազն չորս տարին մեկ անգամ: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է Նախագահը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Նախագահը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 7 օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին և կառույցներին:

22. Կազմակերպության արտահերթ Ժողով հրավիրվում է Նախագահի, կառավարման խորհրդի, վերստուգողի, Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ Նախագահի կողմից՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով:

23. Կազմակերպության արտահերթ Ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ Ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Ժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:

24. Ժողովի բացառիկ իրավասության հարցերնեն՝

1) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,

2) այլ իրավաբանական անձի ստեղծման կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը,

3) Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը,

4) Կազմակերպության կառուցվածքի հաստատումը,

5) Կազմակերպության կառավարման խորհրդի անդամների, վերստուգողի, Նախագահի և տնօրենի ընտրությունը և փոփոխումը,

6) Կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն նախատեսված լինելու դեպքում սահմանելու վարձատրության կարգը և պայմանները.

7) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը, եթե օրենքի համաձայն Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,

8) Կազմակերպության ռազմավարության հաստատումը,
9) չորս տարին մեկ անգամ տնօրենի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը,
10) Կազմակերպության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,
11) Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
12) Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) մասին որոշման ընդունումը,
13) օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

25. Ժողովն իրավազոր է, եթե գումարվել է օրենքին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, և Ժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների կամ խորհրդի կողմից սահմանված համամասնությամբ անդամներից ընտրված պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի որոշումներն ընդունվում են Կազմակերպության Ժողովին ներկա անդամների կամ պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները պահպանվում են հինգ տարի:

<u>Կազմակերպության նախագահը</u>

26. Նախագահին ընտրվում է Ժողովի կողմից չորս տարի ժամկետով:

27.Նախագահը ղեկավարում է կազմակերպության ընթացիկ գործունեությունը, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

28.Նախագահը վարում է ժողովի նիստերը:

29. Նախագահը ղեկավարում է խորհրդի աշխատանքները և վարում է նիստերը:

30. Ներկայացնում է Կազմակերպությունն առանց լիազորագրի:

31. Արձակում է հրամաններ, տալիս է լիազորագրեր:

32. Ընդունում է կազմակերպության անդամ և ազատում կամ զրկում անդամությունից:

33. Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և տույժի միջոցներ:

<u>Կառավարման խորհուրդ</u>

34. Խորհուրդը բաղկացած է քսաներեք անդամից:

35. Խորհուրդն ընտրվում է ժողովի կողմից չորս տարի ժամանակով:

36.Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Կազմակերպության նախագահի կողմից առնվազն տարին մեկ անգամ: Խորհրդի նիստ կարող են հրավիրել նաև կազմակերպության անդամների 20%-ի, Խորհրդի երկու անդամների կամ կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով:

37. Հավանություն է տալիս կազմակերպության նախագահի և տնօրենի հաշվետվություններին:

38. Առաջարկություններ է ներկայացնում ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերի վերաբերյալ:

39. Կառավարման խորհուրդը աջակցում է Նախագահին և տնօրենին կազմակերպության կառավարման գործում:

40. Սահմանում է Կազմակերպության անդամների կողմից անդամավճարի մուծման կարգը, չափերը, ձևերը:

41. Իրավունք ունի քննարկել և լուծել Կազմակերպության գործունեությանն ու կառավարմանն առնչվող ցանկացած հարց, բացառությամբ Ժողովի, բացառիկ իրավասությանը վերապահվածներից, վերստուգողի, տնօրենի լիազորություններից:

42.Կազմակերպության խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների կեսից ավելին:

43. Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

44. Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:

<u>Գործադիր մարմին՝ Տնօրեն</u>

45. Կազմակերպության տնօրենը պաշտոնի նշանակվում և ազատվում է Ժողովի կողմից:

46. Տնօրենը ընտրվում է չորս տարի ժամանակով:

47. Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ և նախագահի կողմից նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրով:

48. Տնօրենը կազմակերպում է ժողովի, նախագահի, կառավարման խորհրդի որոշումների կատարումը:

49.Ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում:

50. Ներկայացնում է Կազմակերպությունն առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր, իրականացնում է Կազմակերպության ողջ գործադիր ղեկավարումը:

51. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

52. Հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները:

53. Հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը:

54. Օրենքով սահմանված կարգով կնքում է գործարքներ, ստորագրում է պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում բանկային հաշիվներ:

55. Ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության՝ մինչև մեկ միլիոն արժողությամբ գույքը, իսկ մեկ

միլիոնից ավելը՝ խորհրդի համաձայնությամբ, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից:

56. Հաստատում է Կազմակերպության տարեկան գործունեության և գույքի օգտագործման հաշվեվությունները, հաշվապահական հաշվառման հաշվետվությունները, Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները, որոնք առնվազն չորս տարին մեկ անգամ ներկայացնում են ժողովի հաստատմանը:

57. Ապահովում է կազմակերպության վարձու աշխատողների պայմանագրերի կնքումը:

Կազմակերպության քարտուղար

58. Կազմակերպության քարտուղարը ընտրվում է խորհրդի կողմից չորս տարի ժամանակով, կազմակերպում է կազմակերպության ողջ գործավարությունը, անդամավճարների գանձումը, սահմանված լինելու դեպքում, վարում է անդամների հաշվառումը, կազմակերպում է կազմակերպության մարմինների նիստերի անցկացումը, իրականացնում է կազմակերպության նախագահի, տնօրենի և խորհրդի կողմից տրված այլ հանձնարարությունները:

Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը)

59.Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) ընտրվում է ժողովի կողմից չորս տարի ժամանակով: Խորհրդի անդամները, Կազմակերպության նախագահը, տնօրենը, հաշվապահը չեն կարող լինել Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ:

60. Վերստուգիչ հանձնաժողովն (վերստուգողը) իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են տարեկան առնվազն 1 անգամ:

61.Վերստուգիչ հանձնաժողովը կարող է Կազմակերպության նախագահից, տնօրենից և այլ աշխատողներից պահանջել Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած տվյալներ և հաշվետվություն:

62. Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) պարտավոր է հաշվետվություն ներկայացնել Ժողովին՝ կազմակերպության գործունեության, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ ամփոփ տվյալների ատուգման արդյունքների մասին:

VIII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

63.Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

64.Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

65.Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝
1) Կազմակերպության անդամների ներդրումները, անդամավճարները,
2)Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
3) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները,
4) դրամական մուտքերը պետական բյուջեից,
5) նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,
6) հանգանակությունները,
7) օրենքով չարգելած այլ միջոցներ:

66.Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար: Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի կարող բաշխվել:

IX. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

67. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով:

68. Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը Ժողովի որոշմամբ սահմանված կարգով օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

69. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով: